

Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների նախարար
_____ Վ. Գաբրիելյան

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ
_____ Գ. Խաչատրյան
8 հուլիսի 2011 թ.
N 34

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ձ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ ՏԱՐԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի և 10-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, օրենքի իմաստով՝

- *եկամուտ է համարվում* հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկ վճարողի սեփական կապիտալի ավելացմանը,

- *սեփական կապիտալ է համարվում* ակտիվների և պարտավորությունների տարբերությունը,

- *ակտիվ է համարվում* հարկ վճարողին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած միջոցը՝ գույքը (նյութական ակտիվները), գույքային իրավունքները և գույքային իրավունքների հետ կապված անձնական ոչ գույքային իրավունքները (ոչ նյութական ակտիվները), արտարժույթը, արժեթղթերը, դեբիտորական պարտքը և այլ գույքը,

- *պարտավորություն է համարվում* հարկ վճարողի առկա պարտքը (վարկ, կրեդիտորական պարտք, հարկային պարտավորություն և այլն),

- *ծախս է համարվում* հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկ վճարողի սեփական կապիտալի նվազեցման:

ՀՀ հարկային օրենսդրության մեջ շրջանալի՝ բազմակի օգտագործման (այսուհետ՝ վերադարձվող) տարայի հարկման առանձնահատկությունները սահմանված են միայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի վերադարձվող տարայի արժեքը չի ներառվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ (բացառությամբ՝ ապրանքների արտահանման դեպքերի, ինչպես նաև այն դեպքի, երբ տարան իրացնում է անմիջական արտադրողը կամ ներմուծողը):

Վերադարձվող տարայի հետ կապված գործարքներ իրականացնելու դեպքում շահութահարկի գծով պարտավորությունները ճիշտ հաշվարկելու նպատակով և

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում են.**

1. Շահութահարկով հարկման նպատակով վերադարձվող տարայի արժեքը չի ներառվում այդ տարայով իրացվող ապրանքներ (արտադրանք) վաճառողի եկամուտների մեջ, եթե ապրանքների (արտադրանքի) իրացման համար հիմք հանդիսացող սկզբնական (հաշվառման) փաստաթղթերում առանձնացված է այդ ապրանքների (արտադրանքի) համար օգտագործված վերադարձվող տարան (քանակը և արժեքը) և դրա դիմաց չի նախատեսվում որևէ հատուցում:

Սույն կետի կիրառության իմաստով նույն տեսակի տարայի վերադարձը չի դիտվում որպես վերադարձվող տարայի դիմաց հատուցում:

2. Շահութահարկով հարկման նպատակով վերադարձվող տարայի դրամական միջոցների դիմաց հանձնման, այլ ապրանքների (արտադրանքի), վերադարձվող չհանդիսացող այլ տարայի, նույնանման կամ այլ վերադարձվող տարայի հետ փոխանակման դեպքերում վերադարձվող տարայի արժեքը ներառվում է այդ տարա իրացնողի համախառն եկամտի մեջ (որպես իրացումից հասույթ):

3. Շահութահարկով հարկման նպատակով վերադարձվող տարայի արժեքը ներառվում է այդ տարայով իրացվող ապրանքներ (արտադրանք) վաճառողի եկամուտների մեջ՝ ՀՀ մաքսային օրենսդրությանը համապատասխան այդ ապրանքների (արտադրանքի) արտահանման դեպքերում: